կ'ըլնը էնոր քեռշք ու սարէն ինձ էլ շանց տաս, ես էլ սէհր ընիմ[1]։

Խալուոր խերսոտաւ[2]։ «Քեռ ի՞նչ բան ի էդ բանիրի խիտ, հալայ[3] տղայ իս»։

Էն էլ մուննաթ էրից[4]։ «Ափօ ջան, կուրբան քե, ես կարիք էրկրից իմ, ի՞նչ կ'ըլնը մէ ձի շանք տաս, ես էլ թամաշայ էնիմ, էրթամ մեր էրկրքիր, ասեմ, ընցկնայ[5] քեռաղաք ըմ կայ»։

Խալուիւր առից զաղէն, էլաւ տանիս, ձեռ պարզից, էսաց. «Էս սիւ փանջարէք[6], սա ամարաթնիր[7] կ'տիսնաս,—թագաւորի աղջկան բնակարանն ի, կ'տիսնաս էդ սիւ յիրդիսնիր»։

Թ'ասաց. «Ափօ ջան, խա»։

Ասաց. «Էնի սիւ փարդայ[8] ի կապած յիրդիկներուն, որ աղջիկ տիւռ չ'տեսնայ»։

Տղէն ասաց. «Ափօ, էս ինչի՞ տանիս ճրագի պէս կ'վառուայ»։

Ասաց. «Որտի՛, էնի ոսկի խնձիւր ի, գեորզ ըմ կայ էնու յիրդանիրու տակ, ինչ զվաթով[9] էլնի՝ էն գեորզ վիրուցի, զարկէ էն ոսկի խնձիւր բիրի տակ, դնի իւր ծուց, թագաւորի խիտ կռիւ անէ, կտրիճ էլնի, աղջիկ կ'տանի իրեն»։

Ասաց. «Օֆ, ափօ, ես ի՞նչ իմ, որ էդ բաներաց ձեռ թալիմ[10]։ քելէ էրթանք, խարցմունս արի քենէ, կ'երթամ յիւրիշ էրկրնիր, կ'ըսեմ Պէնձէ քեռաղաք էսպէս քեռաղաք ի»։

Գնացին խան. խալուիւր քնաւ։

Տղէն էլաւ, կանչից զիւր Աստուած, գնաց խասաւ գեորզի մօտ. դարձաւ աղօթանը, իրիք անգամ ծունդր էդի առաջի Աստծու, դարձաւ ձեռ էթալ գեորզին։ Աստծու հրամանքով գեորզ ինչըխ փառ էկաւ ձեռ. զարկից էդ ոսկի խնձիւր կուտրից, բիրից տակ, էդի ծուց, դարձաւ, էկաւ յիւր խան, քնաւ։

---

[1]) Զբօսնեմ։ [2]) Հերսոտաւ, բարկացաւ։ [3]) Դեռ ևս։ [4]) Խնդրեց։ [5]) Այսպիսի։ [6]) Լուսամուտ։ [7]) Ապարան, պալատ։ [8]) Վարագոյր։ [9]) Ուժով։ [10]) Ձեռ տամ, հետևեմ։